ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/70, 19.04.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ Ո ԵՄԾՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022

Գնման առարկան՝ հավատարմագրային կառավարման ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել ՀՀ Ո ԵՄԾՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մերժել «Հիբրիդ Սիսթեմս» ՍՊ և «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՓԱՍՏԱԲԱՆ
ԱՐՏՈՆԱԳԻՐ 1414

(+374) 91-333-556 TGpastaban@gmail.com ՀՀ, ք. Երևան, Ծատուրյան 34

18.04.2022թ.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

«Էլլիպս ՋԻ Էյ» ՍՊ ընկերության
ներկայացուցիչ, փաստաբան Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՑ
(անձնագիր AS0459611, տրված 27.12.2018թ. 009-ի կողմից,
արտոնագիր 1414)

Պատվիրատու՝
ՀՀ ոստիկանություն
Հասցե՝ ք.Երևան, Նալբանդյան 130

Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը՝
ՀՀ Ո ԵՄՕՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022

Գնման առարկան՝ Հավատարմագրային կառավարման ծառայություններ

ԲՈՂՈՔ

(ՀՀ Ո ԵՄՕՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022 ծածկագրով երկփուլ մրցույթի նախավորակավորման ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2022թ. նիստի N7 արձանագրությամբ կայացված որոշման դեմ)

Հայտնում եմ, որ ՀՀ Ո ԵՄՕՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022 ծածկագրով երկփուլ մրցույթի նախավորակավորման ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Գնահատող հանձնաժողով, կամ Հանձնաժողով) 14.04.2022թ. նիստում, վերստին ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, կրկին կայացրել է սխալ որոշում, որն, ըստ իս, ենթակա է փոփոխման:

Նշված որոշմամբ՝ Հանձնաժողովը բավարար է գնահատել «Հիբրիդ Սիսթեմս» և «UOU Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի ներկայացրած հայտը՝ անտեսելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/17 բողոքով 10.03.2022թ. որոշմամբ տրված նկատառումներին համապատասխան գնահատում կատարելու պահանջը:

«Հիբրիդ Սիսթեմս» և «UOU Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի մասով Հանձնաժողովի կայացրած որոշման ոչ իրավաչափ լինելու հիմքերը և հիմնավորումները.

1. *Որպես ներկայացված պայմանների ապահովման հիմք՝ Հանձնաժողովն ընդունել է մասնակցի ներկայացրած թիվ PSMP3-GO-2-2-9/A-3 պայմանագիրը, ինչը սակայն պետք է մերժեր՝ նկատի ունենալով հետևյալը՝*
   - *Նշված պայմանագիրը կատարված պայմանագիր չէ:*
   - *Նշված պայմանագրով կատարող կողմ են հանդիսացել չորս Ընկերություններ, որոնցից մեկը «UOU Սիսթեմս» ՍՊ ընկերությունը, սակայն չկա հստակ տարանջատում, թե պայմանագրով նախատեսված աշխատանքներից ո՞ր ընկերությունը ո՞ր մասն է ապահովում, բացի այդ, մասնակցի կողմից չի ներկայացվել նշված պայմանագրով կատարված աշխատանքում իր փորձը հիմնավորող որևէ հիմնավորում, այսինքն չի ներկայացվել որևէ փաստ, որ տվյալ պայմանագրում ներառված աշխատանքներում հենց «UOU Սիսթեմս» ՍՊ ընկերությունը կատարած լինի կոնկրետ այն աշխատանքը, որը պահանջվում էր նախարարակավորման ընթացակարգի հայտարարության պայմաններով:*
   - *Անկախ Հանձնաժողովի պահանջից՝ մասնակիցն այդպես էլ չի ներկայացրել նշված պայմանագրին վերաբերող կատարողական ակտերը, համենայն դեպս, այդպիսիք չեն հայտնաբերվել մեզ տրամադրված փաթեթում: Այս դեպքում Հանձնաժողովը խախտել և չի կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, համաձայն որոնց՝ հայտը պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր:*
2. *Իբրև հայտարարության 5-րդ կետով սահմանված «Տեսապատերի մատակարարման և սպասարկման» փորձի հիմնավորում՝ հիմք է ընդունվել մասնակցի ներկայացրած 01.04.2018թ. «UOU Սիսթեմս» ՍՊԸ և «Հիբրիդ Տելեմատիկա» ՍՊԸ միջև կքնված առուվաճառքի պայմանագիրը, որով «UOU Սիսթեմս» ՍՊԸ-ն վաճառել է որոշակի տեսակի և քանակի ապրանքներ, ինչից ոչ մի կերպ չի հիմնավորվում փաստը, որ մատակարարվել է տեսապատ, բացի այդ նշված պայմանագիրը միայն մատակարարման է և չի ներառում անհրաժեշտ սպասարկումը: Պայմանագրում նշված է երաշխիքային սպասարկում (Պայմանագրի 3.1.7 կետ), ինչն ակնհայտ է, որ նույնական չէ հայտարարությամբ պահանջված սպասարկումից, քանզի հայտարարության պայմաններով տրված պահանջների համադիր վերլուծությունից ակնհայտ է, որ սպասարկում եզրույթը կիրառելով՝ Պատվիրատուն նկատի է ունեցել ֆունկցիոնալ, գործառնական, ծրագրային, կառավարման, կամ համանման գործառնությանը վերաբերող գործունեություն և ոչ՝ երաշխիքային սպասարկում, ինչն ընդամենը անորակ, կամ խափանված ապրանքի, կամ դրա մասի նորոգումն է և/կամ փոխարինումը: Ընդ որում, եթե անգամ երաշխիքային սպասարկումը կարելի լիներ համարել պահանջված սպասարկման փորձ, ապա չի ներկայացվել որևէ հիմնավորում փաստացի սպասարկման աշխատանքներ իրականացնելու մասին: Հատկանշական է, որ մնացած բոլոր*

*մասնակիցների մասով Հանձնաժողովը **սպասարկում** եզրույթը կիրառել է իմ կողմից վերը նշված մեկնաբանությամբ, իսկ հիշյալ մասնակցի մասով ցուցաբերել է տարբերակված մոտեցում՝ դրանով խախտելով հավասարության սկզբունքը: Տվյալ դեպքում ևս, Հանձնաժողովը խախտել և չի կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, համաձայն որոնց՝ հայտը պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր:*

3. *Մասնակցի կողմից՝ Ընթացակարգով նախատեսված հայտով ներկայացվել է թվով երեք ենթակապալի պայմանագիր, ըստ որոնց, նախատեսված աշխատանքների մի մասն իրականացվելու է ենթակապալառուների կողմից, ընդ որում՝ ենթակապալառուների մասին ոչ միայն չի նշվել և համապատասխան պայմանագրերի մասին գրառում չի կատարվել Ընթացակարգի հավելված N2-ով նախատեսված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարության մեջ, այլ առհասարակ դրանց մասին չի բարձրաձայնվել գնահատման ընթացքում, բացի այդ նշված երեք պայմանագրերն էլ վերաբերում են նույն աշխատանքի կատարմանը (պայմանագրերի առարկաները բառացիորեն նույնն են) և կնքված են երեք տարբեր ընկերությունների հետ նույն ամսաթվին: Այլից զատ, տվյալ պարագայում առանցքային և առաջնային խնդիրը կայանում է հետևյալում՝*

*Համաձայն Ընթացակարգի հայտարարության 3-րդ կետի 3-րդ պարբերության՝ **«Մրցույթի մասնակիցը (համատեղ գործունեության պայմանագրի (կոնսորցիումի) հիման վրա մասնակցության դեպքում կոնսորցիումի մասնակիցներից առնվազն մեկը) կամ Մասնակցի ենթակապալառուն (եթե աշխատանքներն իրականացվելու են ենթակապալառուի միջոցով) պետք է բավարարի հետևյալ նվազագույն պահանջներին՝...»***

*Համաձայն Ընթացակարգի հայտարարության 4-րդ կետի **«Մասնակիցները նախարակավորման ընթացակարգին կարող են մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)»:***

*Համաձայն Կարգի 32-րդ կետի 6-րդ ենթակետի՝ **«Կնքվելիք պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության կամ ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած այլ մասնակիցը: Եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության կամ ենթակապալի միջոցով, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները.»***

*Համաձայն Կարգի նույն կետի 7-րդ ենթակետի՝ **«Մասնակիցները կարող են գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝...»***

Հայտարարության նշված կետերի և Կարգի նշված դրույթների՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի լույսի ներքո վերլուծությունից հետևում է, որ Ընթացակարգին մասնակիցները կարող են մասնակցել կամ միանձնյա, կամ կոնսորցիումով, կամ միանձնյա՝ գործակալության կամ ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով, այսինքն անկարելի է, որ մասնակիցը մասնակցի կոնսորցիում և ենթակապալառու համադրությամբ: Սակայն գնահատող Հանձնաժողովը կայացրել է տրամագծորեն հակառակ որոշում՝ ըստ էության սխալ մեկնաբանելով և կիրառելով նշված իրավակարգավորումները, այն դեպքում, երբ այս հիմքով ևս պետք է մասնակցի հայտը գնահատեր անբավարար և մերժեր:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, խնդրում եմ պարտավորեցնել Հանձնաժողովին ընդունել համապատասխան որոշում՝ այն է.

Մերժել «Հիբրիդ Սիսթեմս» և «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումով մասնակցի հայտը:

Կից ներկայացվում է՝

1. *Վճարման անդորրագիր*
2. *Լիազորագիր*
3. *Անձնագիր*
4. *Արտոնագիր*

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ